

ՆՈՐԻՆ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹԻՒՆ ՄԻԽԱՅԻԼ ԿՈՐՊԱՉԵՒԻՆ ՆԱԽԱԳԱՀ ՍՈՎԵՏ ՄԻՈՒԹԵԱՆ

Մոսկուա

Մենք ՎԱԶԳԷՆ Ա. Կաթողիկոս Ամենայն Հայոց եւ ԳԱՐԵԳԻՆ Բ. Կաթողիկոս Հայոց Կիլիկեան Աթոռի, Բելգիայում հայկական նորակառոյց Եկեղեցին Օծելու առթիւ միասին գտնուելով, Պրիւքսէլում եւ ապա Փարիզում մեզ ներկայացան բազմաթիւ Հայ պատգամաւորութիւններ՝ Ֆրանսիայից, Անգլիայից, Իտալիայից եւ Միացեալ Նահանգներից, մեզ յայտնելով Արտասահման բնակող երկու միլիոն Հայերի ծանր մտահոգութիւնները Լեռնային Ղարաբաղում վերջերս դրսեւորուող հակահայ քաղաքականութեան վերաբերեալ:

Մենք, արտայայտիչը հանդիսանալով նրանց արդարացի սպասումների, պարտք ենք զգում Ձեր բարձր ուշադրութեան յանձնել հետեւեալները՝

ա.— Արտասահման բնակուող Հայ ժողովուրդը լիայոյս է, որ Սովետական բազմազգ երկրի վերակառուցման ու դեմոկրատացման համար Ձեր ի գործ դրած հետեւողական ջանքերը, աստիճանաբար յաջողութեամբ կը պսակուեն եւ մօտ ապագային ողջ Սովետական Երկիրը կը գտնի իր նոր կեանքի ու զարգացման ուղին, ինքնիշխան ազգութիւնների համերաշխ ընտանիքում:

բ.— Վերակառուցման ու դեմոկրատացման կենսագործման ճանապարհին, Հայերը, նախապայմաններից մէկն են համարում արդարացի լուծումը Լեռնային Ղարաբաղի Հայ ազգաբնակչութեան պահանջների բաւարարման, ազգութիւնների ինքնորոշման իրաւունքի հիման վրայ, այնտեղ ստեղծելով բոլոր օրինական եւ վարչական գործնական պայմանները, որպէս զի Հայ ազգաբնակչութիւնը ինքնիշխան կերպով տնօրինի իր վարչական, տնտեսական, կրթական, մշակութային եւ կրօնական կեանքը անկաշկանդ կերպով:

գ.— Կարծում ենք յարգարժան Տիար Պրեզիտենդ, որ անցնող երկու տարիների ողբերգական արիւնալի իրադարձութիւններից յետոյ՝ Սումգայիդում, Բագուում, Կիրովապատում եւ այլ վայրերում, ժամանակն էր որ Ձեր Պրեզիտենդական իրաւասութիւններով հաճիք անհրաժեշտը տնօրինել, որպէս զի վերոյիշեալ օրինական պայմանները իրապէս ու գործնապէս ստեղծ-

ուեն Լեռնային Ղարաբաղում, կանխելու համար նոր արիւնայեղութիւններ: Դժուար է պատկերացնել Սովետ Միութեան ազգութիւնների համերաշխ գոյակցութիւն եւ գործակցութիւն, առանց յարգելու ազգութիւնների ազատ ինքնորոշման իրաւունքը:

Ձեզ վստահեցնում ենք որ ողջ Հայ ժողովուրդի կամքն է՝ թէ Հայաստանում եւ թէ Լեռնային Ղարաբաղում, ինքնիշխան ապրել ու զարգանալ իր ստեղծարար ուժերով ու իր ազգային արժանապատուութեամբ Սովետ Միութեան ազգութիւնների մեծ Ընտանիքից անբաժան:

Ընդունեցէք Մեծայարգ Տիար Պրեզիտենդ, մեր ամենաջերմ մաղթանքները Ձեր քաջառողջութեան եւ Ձեր հայրենանուէր վերանորոգիչ իտիալների լիակատար յաջողութեան համար:

Խորին յարգանքով՝

ՎԱԶԳԷՆ Ա.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԳԱՐԵԳԻՆ Բ.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

Փարիզ,
14 մայիս 1990



ՀԱՆՈՒՆ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՂՄԻՑ ՌՈՒՍԱՑ
ՆՈՐԸՆՏԻՐ ԱԼԵՔՍԵՅ Բ. ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԱՐԾԱԹՅԱ ԽԱՉ